

քարա սրդին, իր վարպետին մահէն ետք՝ կ'ամբողջացնէ անոր սկսած Աւետարանը, 1505ին, ի Վան:

Ան ունեցած ըլլալու է տակաւին մեզի անձանօթ բաղմաթիւ աշակերտներ, որենք անչուշտ հետզհետէ պիտի յայտնուին:

* * *

Իրր ծանօթութիւն՝ աւելցնեմ, որ Մանկասարենց թումա մըն ալ կը յիշուի, 1415ին, Մերուն (որ «ի նարդեան ժամա-

նակիս Հէրպէտ կոչիմ») զրչէն, իր Աւետարանին յիշատակարանին մէջ, կարգ մը տանուտէրերու շարքին: Աւետարանը գրուած է Ռչտունեաց Ապավանքի Սր. Վարդան մենաստանը (Նօտարք Հայոց, էջ 46):

1415ին, Յով. Մանգասարենց նոր ծրնած էր: Եղբայրներ և քոյրեր ունենալուն մասին՝ ոչինչ ծանօթ է:

(Շար. 2)

Յ. ՔԻԻՐՏԵԱՆ

